ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՌԱՆՑ ԱՐՑԱԽԻ

1991 թուականի Սեպտեմբերի 22ին ելոյթ ունենալով Ստեփանակերտում, Արկադի Մանուչարովը շեշտեց, որ Արցախի հարցում այսօր ամենաընդունելի տարբերակը Մարզը Ռուսաստանի կազմի մէջ մտցնելն է:

Ի տարբերութիւն դրա, Ելցինը եւ Նազարբայեւը Արցախի մայրաքաղաքում ունեցած իրենց ելոյթներում շրջանցեցին հարցի քաղաքական կողմը: Եթէ Ելցինը ամենագլխաւոր խնդիրը համարեց բանակցութիւնների գործընթացը, ապա Նազարբայեւը ասաց, որ իրենք (ինքը եւ Ելցինը) բացարձակապէս չեզոք են ու բացարձակապէս միանման են վերաբերւում սրտով ու հոգով բոլորին եւ աշխատում են երկու կողմերին էլ ըմբռնել:

Միջնորդների այդ «անկողմնակալ» մօտեցումը իր պարզ արտացոլումը գտաւ Մինսքի Վոդիում ստորագրուած փաստաթղթում: Ընդ որում, Հայաստանի ղեկավարութիւնը ձեռք չմեկնեց Արցախին եւ, փաստօրէն, թոյլ տուեց, որ բանակցութիւնների ընթացքում յաղթանակի Արցախը Ադրբեջանի կազմում թողնելու տարբերակը՝ նախագահական ընտրութիւններում յաջողութիւնը գերադասելով Արցախի ճակատագրից: Կամ գուցէ անկախութեան հռչակումը հակակշռուեց Արցախեան իրական խնդրի ըստ էութեան հրաժարումով:

Նիւթերը կարդացէք 15րդ եւ 16րդ էջերում: